ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

ՀԵՌ.(093) 32-59-62
ТЕЛ.(093) 32-59-62

N 01-54
«02» <u>ՕԳՈՍՏՈՍԻ</u> 2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Վարդանյան

7138-12
14 08 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2-Ա

«25» ՀՈՒԼԻՍԻ 2012թ. — գ. ԱՄԲԵՐԴ

## ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 20-ի թիվ 1-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սամվել Սարգսյանի 2012 թվականի հուլիսի 24-ի անձնական դիմումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Սարգսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ, 24 աշխատանքային օր (20 նվազագույն և 4 լրացուցիչ) տևողությամբ, սկսած 2012 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 3-ը ներառյալ:
2. Աշխատանքային պարտականությունները նշյալ ժամանակահատվածում դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Գարուշ Ղարիբյանի վրա:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Լ. Վարդանյան

2012 թվականի հուլիսի 25

գ. Ամբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

«23» ՅՈՒԼԻՍԻ 2012թ. | գ. ԱՄԲԵՐԴ

## ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի սեպտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին Ամբերդ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝
   1) Կոմիտասի 14 հասցեում գտնվող Ամբերդի մշակույթի տունը, , տարածքի տիրապետող նշանակել՝ «Մշակույթ» միացյալ տնօրնության տնօրեն՝ Էդգար Ռաֆիկի Ստեփանյանին:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել Լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար պաշտոնակատար՝ Լ. Վարդանյան

Կ.Տ

2012 թվականի հուլիսի «23»

գ. Ամբերդ